Արձանագրություն N 2
«ՀԳԴ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան «28» «փետրվարի» 2017թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Մեժլումյանը
Կ. Ավագյանը
Ռ. Առաքելյանը
Ա. Պիվազյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Գաբրիելյանը

Ի. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին
(Հ. Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	ՆԱԿՕՅԼ ՍՊԸ	10.	Վարմէքս ՍՊԸ
2.	ԴԱՐՖ ՍՊԸ	11.	Ինգլիշ Թրեյդ Հաուզ ՍՊԸ
3.	Ֆլեշ Մոտորս ՍՊԸ	12.	Մոսէսքո ՍՊԸ
4.	Ավտոֆան էյ Սի ՍՊԸ	13.	ԷՔՍՊՈՐՏ ՕՅԼ ՍՊԸ
5.	Արպանիվ ՍՊԸ	14.	Հույս-Մոտոր ՍՊԸ
6.	Մ-Բի-Ռ ՍՊԸ	15.	Ժակ և Գոռ ՍՊԸ
7.	Էրիկո ՍՊԸ	16.	Ա/Ձ Թեմուր Գալստյան
8.	Սենտրալ ՍՊԸ	17.	Ա/Ձ Հայկ Գալստյան
9.	ՌԱՆ-ՕՅԼ ՍՊԸ		

1.2. Հրավերով (ծանուցումով) սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով (ծանուցումով) սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

- համապատասխանում են՝ ԴԱՐՖ ՍՊԸ, Ֆլեշ Մոտորս ՍՊԸ, Ավտոֆան էյ Սի ՍՊԸ, Արպանիվ ՍՊԸ, Մ-Բի-Ռ ՍՊԸ, Էրիկո ՍՊԸ, ՌԱՆ-ՕՅԼ ՍՊԸ, Ինգլիշ Թրեյդ Հաուզ ՍՊԸ, ԷՔՍՊՈՐՏ ՕՅԼ ՍՊԸ, Մոսէսքո ՍՊԸ, Հույս-Մոտոր ՍՊԸ, Ժակ և Գոռ ՍՊԸ կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

- չի համապատասխանում՝ ՆԱԿՕՅԼ ՍՊԸ, Սենտրալ ՍՊԸ, Ա/Ձ Թեմուր Գալստյանի, Ժակ և Գոռ ՍՊԸ, Վարմէքս ՍՊԸ կողմից ներկայացված հայտերը:

ՆԱԿՕՅԼ ՍՊԸ կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը վավերացված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ այլ անձի կողմից սակայն բացակայում է համապատասխան լիազորագիրը:

Սենտրալ ՍՊԸ և Ա/Ձ Թեմուր Գալստյանի (հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ) կողմից ներկայացված հայտերում բացակայում են Հավելված 3.4-ը, որի փոխարեն կցված է Հավելված 3.5:

Ժակ և Գոռ ՍՊԸ կողմից ներկայացված հայտում 3-րդ չափաբաժնով ներկայացված է սխալ գնային առաջարկ:

Վարմէքս ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բոլոր չափաբաժիններով ներկայացված է սխալ գնային առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 168-Ն որոշման 45-րդ կետը՝ կասեցնել հայտերի բացման նիստը մեկ աշխատանքային օրով՝ հնարավորություն տալով ՆԱԿՕՅԼ ՍՊԸ-ին, Սենտրալ ՍՊԸ-ին և Ա/Ձ Թեմուր Գալստյանին ուղղել նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 01.03.2017թ. ժամը 12:00-ին ՀՀ կենտրոնական զինվորական դատախազության շենքում, հասցեն՝ ք. Երևան, Սունդուկյան 66ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Մարտիրոսյան

Անդամներ՝ _____ Մ. Մեժլումյան

_____ Կ. Ավագյան

_____ Ռ. Առաքելյան

_____ Ա. Պիվազյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա.Գաբրիելյան